ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

16 ՄԱՐՏԻ
2026 թ.
№ 4 (1159)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԾՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Մանկավարժական համալսարանի և կրթության ոլորտի կանա՛յք, սիրելի՛ մայրեր, քույրեր, աղջիկներ, շնորհավորում ենք բոլորիդ գարնանային տոների կապակցությամբ:

Ձեզ բոլորիդ մաղթում ենք հոգու և մտքի կորով, երջանկություն, սեր և խաղաղություն: Թող այս գարունը Ձեզ աշխատելու, ստեղծագործելու, արարելու և նվիրվելու մեծագույն կամք շնորհի, թող աշխատանքային յուրաքանչյուր հաջողություն բերկրանքով լցնի Ձեր հոգիները:

Թող այս գարունը կրթության լույսով լցնի յուրաքանչյուր հայ օջախ՝ պարգևելով ծաղկաբույր գարուններ:

Երիցս իրավացի է Ջ. Մաձինին. «Սիրեք և հարգեք կնոջը, նրա մեջ փնտրեք ոչ միայն մխիթարություն, այլ զորություն, ոգեշնչում, ձեր բարոյական ու հոգեկան ընդունակությունների սատարում»:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
պաշտոնաթերթի խմբագրություն

Ավարտական վկայականներ՝ մագիստրոսներին

Բանասիրական, Պատմության և հասարակագիտության, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, Սկզբնական կրթության ֆակուլտետների, ինչպես նաև «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի հեռակա համակարգի 73 մագիստրոսի հանդիսավորությամբ տրվեցին ավարտական վկայականներ: Նրանցից 11-ն արժանացավ կարմիր դիպլոմի: ➢2

***

Դպրոցն ու գրականությունը ուրիշ բան չեն, եթե ոչ ամենից առաջ լեզու…

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Հովհաննես Թումանյան

***

Կինն է այն առանցքը, որի շուրջը պտտվում է քաղաքակրթությունը:

Ռաֆֆի

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ»

Մարտի 4-7-ը ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը մասնակցեցին բուհի երկարամյա գործընկեր՝ Ցյուրիխի մանկավարժական համալսարանի նախաձեռնությամբ «Կրթություն հանուն ժողովրդավարության և խաղաղության» խորագրով միջազգային մանկավարժահետազոտական ծրագրի շրջանակներում անցկացված համաժողովին:

Ծրագրի անդամ է ավելի քան 30 բարձրագույն ուսումնական հաստատություն, կրթական նախաձեռնությունների կենտրոն, հասարակական կազմակերպություն, այդ թվում՝ Շվեյցարիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ուկրաինայից, Մոլդովայից, Կոսովոյից, Կիպրոսից՝ համապատասխան փորձագետներով և հետազոտական թիմերով:

Քառօրյա համաժողովը ներառում էր ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումներ, քննարկումներ, ժամանակակից մանկավարժական կրթության հիմնահարցեր՝ ժողովրդավարական հասարակության կայացման և խաղաղության օրակարգի հաստատման հարցերի շուրջ:

Խորհրդաժողովի ընթացքում ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց ՀՀ կրթական համակարգի արդի զարգացման մասին պատմական ակնարկ, կայացման ուղին, արդի նախագծերն ու հիմնահարցերը, որոնք առնչվում են բարձրագույն մանկավարժական կրթության տարաբնույթ հարցերին, հանրակրթության մասին նոր օրենքով սահմանված առաջնայնություններին, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» նախագծի տեսլականով պայմանավորված հրամայականներին, բուհ-դպրոց մասնագիտական, մանկավարժամեթոդական և հասարակական-էթիկական հիմնահարցերին:

Աշխատանքային խմբերի քննարկումներում ներառված էին ժողովրդավարական կրթության և խաղաղության օրակարգի հիմնահարցեր՝ պատմական հիշողություն, ստեղծարարություն, հակամարտությամբ պայմանավորված հակասական հիմնախնդիրներ և իրարամերժ տեսակետներ, դրանց հաղթահարման ուղիները, ժամանակակից կրթական փիլիսոփայությունը ժողովրդավարական արժեքների ուսուցման/յուրացման, դրանց կայացման ճանապարհին և այլն:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը Գերմանիայի Կրթական մեդիայի Լայբնիցի համալսարանի փորձագետ Բարբարա Քրիստոֆի հետ համատեղ նախանշեցին Պատմության դասերին պատմական հիշողության մեջ ամրագրված հիմնահարցերի քննարկման առանձնահատկությունների վերաբերյալ իրականացվելիք հետազոտական աշխատանքը՝ դասագրքերի, ուսումնական նյութերի վերլուծության, պատմական համատեքստի ներկայացման տրամաբանության, դասավանդման մեթոդաբանության, քննական մտածողության զարգացման և այլ հարցերի առնչությամբ:

Հետազոտական թիմը պայմանավորվեց քննարկման առարկա դարձնել խորհրդային անցյալին առնչվող հիմնահարցերը՝ ժամանակաշրջանը քննարկելով գերմանացի և հայ ժողովուրդների պատմական հիշողության տեսանկյունից:

Ավարտական վկայականներ՝ մագիստրոսներին

➢1 Մագիստրոսներին կարևոր օրվա առթիվ շնորհավորեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ու հորդորեց բարձր պահել բուհի պատիվը, լինել պետության արժանապատիվ քաղաքացիներ և ծառայել մեր երկրին, գալիք սերնդին:

Նա հույս հայտնեց, որ ավարտական վկայականներն ու ներդրած վաստակը կծառայեն իրենց նպատակին և տարիներ անց, հետահայաց էլ կկարևորվեն և կարժևորվեն ուսումնառության տարիները. «Երազեք, ձգտեք ունենալ ավելին, բարձր նշաձող սահմանեք, երազանքը դարձրեք նպատակ, նպատակը՝ գործողություն և կրկին երազեք»,-նշեց Լիլիթ Մկրտչյանը:

Շրջանավարտներին շնորհավորեցին նաև Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, ֆակուլտետների ղեկավարներն ու մաղթեցին հաջողությամբ կրթել և դաստիարակել հաջորդ սերունդներին. դա նրանց ամենակարևոր առաքելությունն է:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵՑԻՆ ՆՈՒՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և դաստիարակի օգնականի պարտադիր վերապատրաստման» դասընթացի 70 մասնակից ստացավ հավաստագիր:

90 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացն անցկացվել է դեկտեմբերի 8-22-ը. գործընթացը ներառել է նախադպրոցական կրթության բնագավառի օրենսդրություն, ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացում, տարիքային հոգեբանություն, համընդհանուր ներառում, նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ, 21-րդ դարի հմտություններ, հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներ:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցներին և հույս հայտնեց, որ նրանք գոհ են այն արդյունքներից, իմացությունից, հմտություններից և փորձառությունից, որ ձեռք են բերել կյանքի կարևոր փուլում Մանկավարժականի հետ միասին՝ ուժեղացնելով նաև մասնագիտական տիրույթում ունեցած կապերը. «Ցանկացած նոր փուլ մի նոր իրողության սկիզբ է. ընդունեք և բաց եղեք դրանց առաջ՝ դիտարկելով արժեք, ուժեղանալու և խնդրից դուրս գալու հնարավորություն»:

Լիլիթ Մկրտչյանը նշեց՝ նախադպրոցական տարիքն ամենակարևորն է. մասնակիցներն էլ կրթության ոլորտի ամենակարևոր մարդիկ, որոնք իրականացնում են առողջ երեխա դաստիարակելու կարևոր առաքելությունը:

Մասնակիցները գոհունակություն հայտնեցին վերապատրաստումների վերաբերյալ և վստահեցրին՝ վերապատրաստող փորձառու թիմի աշխատանքի, բանիմաց և գրագետ մասնագետների շնորհիվ լրացրին մասնագիտական կարողությունների բացը:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը վստահեցրեց՝ բուհն անում է հնարավորինը՝ գործընթացը լավարկելու և զարգացնելու համար:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայաստանի պաշտպանության առաջին նախարար, ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան 67-ամյակի առթիվ ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի անդամներն այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն, որտեղ ապագա ուսուցիչները հարգանքի տուրք մատուցեցին ՀՀ ազգային հերոսի, պետական և ռազմական գործչի հիշատակին և ծաղիկներ խոնարհեցին շիրիմին:

Օրը շարունակվեց Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան այցելությամբ: Ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու Սպարապետի կյանքին, անցած ուղուն, պետական և ռազմական գործունեությանը, ինչպես նաև այն կարևոր գաղափարներին, որոնք առաջնորդել են նրան հայրենիքի համար պայքարի և պետականության ամրապնդման գործում:

«Այս օրը ևս մեկ հնարավորություն էր արժևորելու մեծանուն պետական գործչին, խոնարհվելու նրա հիշատակի առաջ և հիշեցնելու այն արժեքները, որոնց համար ապրել ու պայքարել է Սպարապետը»,-կարևորելով ձեռնարկը՝ նշեց Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ

ՀՊՄՀ Ուսանողական խորհուրդն ազդարարեց «Ուսանողական գարուն» մարզամշակութային-կրթական ծրագրերի մեկնարկը: Միջֆակուլտետային մրցումները կանցկացվեն երեք ուղղություններով՝ մարզական, մշակութային և կրթական, կամփոփվեն մայիսին:

Կառույցի ղեկավարը ներկաներին ծանոթացրեց անցկացվելիք ծրագրի նպատակներին ու խնդիրներին:

Ուսանողներին շնորհավորեց համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ խորհրդանշական համարելով, որ մրցույթի մեկնարկը տրվում է գարնան սկզբին, որը նաև կյանքի վերազարթոնքն ու շարունակականությունն է խորհրդանշում: Լիլիթ Մկրտչյանն ուսանողներին հորդորեց ակտիվ, պատրաստակամ և հանրության համար արժանապատիվ քաղաքացիներ լինել, մասնակցել ուսանողական կյանքին և այդ ժամանակահատվածը օգտագործել իրենց օգտին՝ իրենց ուժեղացնելով ոչ միայն գիտելիքներով, այլև հմտություններով, դառնալու 21-րդ դարի պահանջներին համապատասխանող ուսանող ու քաղաքացի:

Բարի ընթացք մաղթելով ուսանողական ծրագրերին՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն ընդգծեց՝ հետևելու է միջֆակուլտետային մրցումների իրականացման ընթացքին և աջակցելու է ուսանողական բոլոր ծրագրերին:

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«ՈՒԶՈՒՄ ԵՄ, ՈՐ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵՆ».

Զուլիետա Գյուլամիրյան

-Տիկին Գյուլամիրյան Ձեր կյանքի պատմությունն անխզելիորեն կապված է Մանկավարժական համալսարանի հետ.ակունքներից եկող ի՞նչ հիշողություններ կան...

- Ռաֆֆու անվան դպրոցը տասնմեկամյա կրթությամբ ավարտելուց հետո ես դիմեցի Մանկավարժական ինստիտուտ: Գործերն ընդունում էին Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Վասիլ Հարությունյանը և Բանասիրական ֆակուլտետի դեկանը, որոնք տեսնելով իմ բարձր նիշերը՝ հորդորեցին գործերս տամ ոչ թե Սկզբնական կրթության, այլ Բանասիրական ֆակուլտետ: Հաջորդ օրը հայրիկիս հետ գնացի ընդունող հանձնաժողով և պնդեցի, որ ես ուզում եմ սովորել Սկզբնական կրթության ֆակուլտետում: Հավելեմ, որ ես ունեի երեք տարվա աշխատանքային ստաժ, որը հնարավորություն էր տալիս բուհ ընդունվել առանց մրցույթի: Հավելեմ, որ ես աշխատել էի և այդ տարիների ընթացքում մեծ կարողություններ էի ձեռք բերել, որով առանձնանում էի մյուսներից: Լենինյան կրթաթոշակառու էի և այն տարիների համար մեծ գումար էի ստանում:

Այսպես եղավ իմ մուտքը Մանկավարժական:

Իմ կայացման գործում մեծ դեր են ունեցել իմ դասախոսները, բայց հատկապես հենակետային գիտելիքների համար պարտական եմ իմ մանկավարժության դասախոս Սեդա Միրզոյանին:

- Ամբիոնում հմուտ, ճանապարհ անցած մասնագետներ են աշխատում, իսկ Ձեր դասագրքերն առ այսօր գործածվում են սփյուռքում:

- Ես երկար ճանապարհ եմ անցել մանկավարժության ոլորտում, մեր ամբիոնում էլ որպես տարրական դպրոցի դասագրքերի հեղինակ՝ բոլորը կայացած, հասարակության կողմից ճանաչված մասնագետներ էին: Ինքս շուրջ 700 հրատարակությունների հեղինակ եմ, որից 30-ը՝ դպրոցական դասագրքեր, ավելի շատ սփյուռքահայ դպրոցի դասագրքեր եմ հրատարակել, քան Հայաստանի դպրոցների, բայց ունեցել եմ ռուսական դպրոցի Այբբենարան, Մայրենիի դասագրքեր որոնք գործում էին 80-ական թվականներին: Առ այսօր սփյուռքի իմ դասագրքերը գործածության մեջ են:

- Որևէ վիճակագրություն ունե՞ք Ձեր շրջանավարտների հաջողությունների մասին:

- Նախ ասեմ, որ մեր ուսանողների մեջ որակական փոփոխություններ են նկատվում. մենք նախկինում ունեցել ենք նույնիսկ մեդալակիր ուսանողներ: Իմ կուրսում կային երկու մեդալակիր: Այսօր, ցավոք, շատ ցածր միավորներով են ընդունվում, իսկ շատ մասնագիտությունների գծով հատկացված տեղերը թափուր են մնում, ուր մնաց խոսել մրցույթի մասին: Բայց այսօր էլ ունենք շրջանավարտներ, որոնք հրաշալի ուսուցիչներ են:

-Այսօր ի՞նչ անձնային ու մասնագիտական որակներ են պետք տարրական դպրոցի ուսուցչին:

-Տարրական դասարանների ուսուցիչը, գիտելիքներից բացի, առաջին հերթին որակական որոշ հատկանիշներ պետք է ունենա: Ուսուցչական աշխատանքի ընթացքում նրանք անընդհատ վերապատրաստվում են, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերում: Բայց անձնային որակներն արդեն ձևավորված են, դժվար է ինչ-որ բան փոխել: Կարևորում եմ տարրական դասարանի ուսուցչի ստեղծագործականությունը, եռանդը, ցավոք այսօրվա ուսանողների մեջ նախկին եռանդը չկա...

Զուլիետա Գյուլամիրյան
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զարգացած տեխնոլոգիաների այս դարաշրջանում ուսանողները շատ հաճախ չեն կարողանում նպատակային ու ճիշտ օգտվել արհեստական բանականությունից և ժամանակակից այլ գործիքներից. ինքնուրույն խոսքի բացակայությամբ հետազոտական աշխատանքը ներկայացվում է աղքատիկ և զուրկ ստեղծագործականությունից:

-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

-Ես բուհն ավարտել եմ 1970-ականներին, ապա այստեղ աշխատել եմ մինչև 1974-75 թվականները: Թեև հետո մասնակցեցի մրցույթի գիտահետազոտական ինստիտուտում և անցա, բայց Մանկավարժականում ժամավճարով շարունակեցի աշխատել: 1992 թվականին նորից վերադարձա հարազատ բուհ:

18 տարի աշխատել եմ որպես ամբիոնի վարիչ, այսօր էլ շարունակում եմ ղեկավարել Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման ամբիոնը, որտեղ հիմնականում աշխատում են իրենց գործն իմացող, բարեխիղճ դասախոսներ: Ուզում եմ խոսել 130-140 հազար ստացող դասախոսների մասին. կես դրույքաչափի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ նրանք աշխատում են նաև համալսարանից դուրս այլ համալսարաններում ու կենտրոններում, ինչը վատ է, և որի ուղղությամբ քայլեր պետք է ձեռնարկել:

Անցած երկու տարիներին 100-120 շրջանավարտ ենք տվել, իսկ ընդունվել է 17-22 դիմորդ: Գնալով դասախոսի ժամաքանակը նվազում է դիմորդների պակասով պայմանավորված: Դա խանգարում է դասախոսներին, բայց նրանք շարունակում են աշխատել, դասագրքերի հեղինակներ ունենք, բոլորն ընդգրկված են փորձագիտական խմբի մեջ, կապը դպրոցի հետ առաջին հերթին պրակտիկայով է պայմանավորված:

-Ձեր գիտակցական ողջ կյանքը կապված է Մանկավարժականի հետ՝ ուսումնառություն, աշխատանք... Ի՞նչ կմաղթեք Ձեր կին գործընկերներին, շրջանավարտներին և և ուսանողուհիներին:

-Ուզում եմ, որ մեր շրջանավարտները և ուսանողները, բոլոր ուսուցիչները երջանիկ լինեն: Առողջ ու երջանիկ երեխաներ դաստիարակելու համար ուսուցիչը պետք է երջանիկ լինի, պետք է ապահով լինի: Ուսուցիչը դասարան մտնելիս պետք է բարձր տրամադրություն ունենա, ոչ թե մտածի ընտանեկան խնդիրների մասին: Ուզում եմ, որ երջանիկ լինեն, սիրեն երեխաներին, սիրենց իրենց ընտանիքը, հայրենիքը, մասնագիտությունը և նվիրումով աշխատեն:

Մեր ուսանողները բարձր ուսման վարձ են վճարում, բայց դպրոցում ցածր են վարձատրվում: Բազմաթիվ ուսանողներ ունենք, որոնք հրաշալի ուսուցիչներ են, բայց ունենք նաև շրջանավարտներ, որոնք տարբեր հանգամանքներով պայմանավորված, դպրոց չեն մտնում: Երեխայի հետ գործ ունեցող մարդը պետք է առողջ հոգեկան աշխարհ ունենա, որպեսզի երջանիկ ապրի:

Այսօր դպրոցականների մոտ նկատվող ագրեսիվությունը ես դիտարկում եմ որպես մանկավարժական ոլորտի բացթողում. այսօրվա դպրոցներում դաստիարակչական աշխատանքը չես համեմատի նախկին դպրոցի դաստիարակչական աշխատանքի հետ:

Նաև կուզեի խոսել մի խնդրի մասին. քանի որ գնահատում այլևս չկա, նվազել է սովորողների հետաքրքրությունը, ծնողների շահագրգռվածութ-յունը, դպրոց-ծնող կապն է թուլացել: Թեև համաձայն չեմ, որ ծնողները դպրոցում ամեն ինչ կապում են գնահատականի հետ: Գնահատելը շատ դրական կողմեր ուներ՝ մրցակցային միջավայր էր ստեղծում, բայց շատ ուսուցիչների համար դա սովորողներին ճնշելու զենք էր: Կարծում եմ լիազոր մարմինը դա է հաշվի առել գնահատումը հանելիս: Բայց փոխանակ մոտեցումը շտկվի, գնահատումը վերացվեց: Ու եթե ուսուցչին բարձր աշխատավարձ տային՝ որոշ ուսուցիչներ միգուցե գնահատականն այլևս որպես զենք չօգտագործեին:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ես ապագա ուսուցիչ եմ, կամ դաստիարակությունը սկսվում է մեզնից

Երեխան դատարկ թուղթ չէ, որ ուզածդ գրես և ջնջես: Նա մարդ է՝ մտքով, սրտով, հոգով: Եվ ամեն ինչ, ինչ դու անում ես, մնում է նրա ներսում: Եթե բղավում ես՝ իմացիր՝ դու սովորեցնում ես, որ բղավելը խնդիրներ լուծելու տարբերակ է: Եթե զբաղված ես հեռախոսով՝ սովորեցնում ես, որ էկրանը ավելի կարևոր է, քան աչքերի կապը: Եվ երբ մի օր կլսես նրանից նույն բանը՝ «չեմ կարող», «ձանձրանում եմ», «մի խոսիր», հիշիր՝ դու ես այդ հիմքը դրել: Որովհետև վաղը այդ երեխան լինելու է քո հայելին:

Ես ապագա ուսուցչուհի եմ: Եվ դասարան չեմ մտնելու այն մտքով, որ ես միայն իմ առարկայի պատասխանատուն եմ: Ո՛չ, ես մարդկանց հետ եմ աշխատելու, փոքր մարդկանց, որոնց հոգիները դեռ փխրուն են, բայց սպասում են ձևավորվելուն: Եվ ամեն օրս ես դասարան եմ մտնելու՝ ոչ միայն գիտելիք փոխանցելու, այլ մի ամբողջ մարդ բարոյական արժեքներ ձևավորել:

Դե իհարկե, ես նրանց ծնողը չեմ: Բայց երբեմն ես եմ լինելու միակ մեծահասակը, որը լսելու է նրանց: Երբեմն՝ միակ ձայնը, որ ասելու է. «Դու կարող ես»: Երբ ասեմ՝ «փորձիր կրկին», ես կդաստիարակեմ կամք: Երբ նայեմ աչքերին ու ժպտամ՝ ես կձևավորեմ սիրված լինելու զգացողություն: Սակայն երբ կորցնեմ ինձ, բարձրացնեմ ձայնս, անտեսեմ, վիրավորեմ՝ ես կդարձնեմ նրանց անվստահ, խեղճ կամ երբեմն՝ գոռոզ: Եվ նրանց մեջ կսերմանեմ այն միտքը, որ նրանք նույնպես կարող են այդպես վարվել:

Դաստիարակությունը միայն տանը չէ, որ տրվում է երեխային: Շուտով ես ծնողից հետո լինելու եմ այն անձը, որը մեծ ազդեցություն է ունենալու նրանց ձևավորման վրա: Ես նրանց աչքի առաջ եմ լինելու ամեն օր: Նրանց խոսքի, վարքի, վերաբերմունքի վրա ունենալու եմ ազդեցություն: Այս գիտակցումով եմ մտնելու դասարան, քանի որ ես ուզում եմ, որ մի օր՝ տարիներ անց, իմ կրթած սերունդները հիշեն ինձ ոչ որպես ուսուցիչ, այլ՝ որպես մի մարդ, որն իրենց հավատաց, որը տեսավ այն, ինչ չէր երևում, որը լսեց նրանց լռությունը, որը սովորեցրեց, որ գիտելիքը ուժ է, իսկ մարդ լինելը՝ առաքելություն:

Ես ապագա ուսուցիչ եմ: Եվ ամեն օրս նպատակ է ունենալու նրանց մեջ բարոյական արժանիքներ դաստիարակելու:

Եվ եթե դու էլ ես ուսուցիչ՝ հիշիր՝ դու մեծ դեր ունես սերունդներ ձևավորելու գործում, քանի որ վաղը մեր առջև նրանք կանգնելու են մեր դաստիարակության արտացոլանքով: Դաստիարակությունը սկսվում է մեզնից:

Շուշան ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«ԿՈՒԶԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԻ, ԲԱՅՑ ՈՐ ԱՅԴ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԻ ԲՈԼՈՐԻՆ».

ՌՈՒԶԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

-Տիկին Ռուզաննա, Ձեր կենսագրությունն անքակտելիորեն կապված է Մանկավարժականի հետ. ինչպե՞ս եղավ, որ Մանկավարժականը դարձավ Ձեր հարազատ օջախը:

-Դպրոցն ավարտելուց հետո ուզում էի ընդունվել Մանկավարժական, ցավոք ես վերջին՝ «Պատմություն» առարկայի քննությունից չկարողացա դրական գնահատական ստանալ և չընդունվեցի բուհ:

Դպրոցն ավարտեցի 16 տարեկանում և տեղավորվեցի բուհի քիմիայի լաբորատորիայում որպես «պրեպարատոր»՝ լաբորանտի օգնական. քիմիական փորձից հետո սարքավորումները լվանում և պատրաստում էի հաջորդ դասի փորձերի համար:

Որոշ ժամանակ հետո նորից փորձեցի քննություն հանձնել. այս անգամ դիմեցի հեռակա համակարգ և ընդունվեցի: Իմ պատասխանները գոհացրին ընդունող հանձնաժողովի անդամներին և ռեկտորին, որին չէի ճանաչում: Վերջինս էլ որոշեց, որ ես պետք է աշխատեմ ռեկտորատում՝ պրոռեկտորի քարտուղարուհուն փոխարինող, զուգահեռ սովորում էի: Այնուհետև փոխվեց ռեկտորատի ղեկավար կազմը և ինձ նշանակեցին ռեկտորատի տեսուչ: Այսպես սկսվեց իմ աշխատանքային կենսագրությունը:

-Տեսուչի կարգավիճակում Դուք շատ երկար աշխատեցիք...

-Այո, մինչև 2010 թվականը, որից հետո տեղափոխվեցի բուհի ուսումնական վարչություն՝ սկզբում որպես ավագ տեսուչ, ապա ավագ մասնագետ, իսկ հիմա՝ նորից մասնագետ:

Հավելեմ, որ վերահսկիչ պալատի ստուգումների արդյունքում, հաշվի առնելով իմ աշխատանքի ծավալը, աշխատավարձս բարձրացրին:

-Ձեզ բոլորը ճանաչում են որպես զեղչերի տիկին Ռուզաննա... Դուք այդ աշխատանքում այնքան արհեստավարժ եք... Գաղտնիք չէ, որ Ձեր աշխատանքը բավականին ծավալուն է ու բարդ. կներկայացնե՞ք աշխատանքի բարդություններն ու առանձնահատկությունները:

-Սկզբնական շրջանում «զեղչ» հասկացություն չկար, որովհետև բուհում սովորելը բոլորի համար անվճար էր: 1993 թվականից բուհերին լրացուցիչ վճարովի տեղեր հատկացրին, որի հետ կապված զեղչերի խնդիր առաջացավ: Այդ համակարգի ներդրումը սկսվեց, երբ ես աշխատում էի համալսարանում: 2006 թվականին արդեն կառավարության որոշում եղավ, որ կատեգորիաների սովորողների վարձավճարները պետք է զեղչվեն և ինչ չափով: Ես զեղչերի իրականացման ակունքներում եմ եղել: Սկզբնական շրջանում կառավարությունը զեղչեր էր անում երաշտի, կարկուտի, տեռորիստական ակտի հետ կապված, երբ բանասիրականի մասնաշենքի ուսանողներին ինչ-ինչ մարդիկ տեռորի էին ենթարկել...

-Ժամանակի հետ զեղչային համակարգի կատեգորիաները փոխվո՞ւմ են...

-Այո, այժմ էլ զեղչեր են արվում Արցախի բռնագաղթվածների հետ կապված... Ավելի վաղ զեղչվում էր բուհերում նույն ընտանիքից երկու ուսանողների վարձերը, հետո մի քիչ փոխվեց, կանոնակարգը մշակվեց և զեղչվում էր նույն ընտանիքից նույն բուհում սովորող երկու ուսանողի վարձերը:

Ընդհանրապես գոյություն ունեն երկու տիպի զեղչեր՝ զեղչեր, որ ֆինանսավորում է կառավարությունը, և զեղչեր, որ ֆինանսավորում է բուհը:

Կառավարության կողմից ֆինանսավորվող ուսանողների փաթեթները ուղարկում ենք նախարարություն՝ սովորողի մասին բոլոր տվյալներով հանդերձ: Ցուցակներում ներառվում են այն երեխաները, որոնք անապահով են և ունեն սահմանայինից բարձր միավոր, սահմանամերձ աջակցություն ստացող շրջանների երեխաները, որոնք այնտեղ ավարտել են միջնակարգ դպրոցը և 5 տարի այնտեղ հաշվառված են և բնակվում են, մարտական գործողությունների մասնակիցները, ինչպես նաև 2 անչափահաս երեխա ունեցող ուսանողները, որոնք բակալավրի առկա կրթական ծրագրով են սովորում: Պետական աջակցությամբ ֆինանսավորում են ստանում նաև երկկողմանի ծնողազուրկ երեխաները մինչև 25 տարեկան, 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող ուսանողներն ու ծնողազուրկները:

-Իսկ ո՞ւմ վարձավճարներն են զեղչվում բուհի կողմից:

-Բուհը որոշում ունի զեղչել ուսանողների առնվազն 10 տոկոսի վարձերը, սակայն անապահով ընտանիքների երեխաները շատ են, և միշտ մենք անցնում ենք այդ սահմանաչափը: Բացի այն, որ բուհը զեղչեր է անում՝ սահմանված Կրթության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, այլ կատեգորիաներ էլ է ավելացվել զեղչերի համակարգում, որի մեջ մտնում են համալսարանի աշխատողների երեխաները, հեռավոր լեռնային սահմանամերձ շրջանների ուսուցիչների երեխաները (որպես ուսուցիչ պատրաստող բուհ՝ հաշվի ենք առնում և խրախուսում լեռնային շրջանների ուսուցիչներին), համալսարանի 2 վճարովիները, 3-րդ խմբի հաշմանդամ ուսանողներին ենք ներգրավել, հաշվի առնելով, որ պետությունը միայն 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին է ներառել, նաև զոհված ազատամարտիկների քույր և եղբայրներին, որոնք սովորում են մեր բուհում:

-Զեղչային համակարգում ուսանողներին ներառելու գործընթացում հնարավո՞ր են վրիպումներ:

-Ճիշտ է, բարդ ու պատասխանատու աշխատանք ենք իրականացնում, բայց այստեղ չի կարելի վրիպել: Լինում են դեպքեր, երբ ուսանողը որևէ կատեգորիայի մեջ չի մտնում, բայց ծանր դեպքեր են լինում, և մենք բացառություններ ենք անում:

Աշխատանքը նաև ռիսկեր է ենթադրում. փաստաթղթային նորմատիվներ կան, որոնք խստիվ պետք է կիրառել, հնարավորինս չսխալվելու և բացթողումներ չունենալու գիտակցությամբ: Սա ֆինանսական գործառույթ է և տարբեր կառույցների կողմից ենթակա է անընդհատ վերահսկողության և ստուգման: Ի դեպ, վերջերս Պետական վերահսկողության ծառայությունից էին ստուգում և շատ գոհ էին մեր աշխատանքից:

-Դուք այս գործի ակունքներում եք, պրակտիկ դաշտում գործունեություն եք ծավալում անընդհատ մշակվող ու կատարելագործվող համակարգում...

-Այո, այս համակարգը զարգացման դինամիկա ունի, տարակարգերն են փոխվում, ստատուս քվոն...անընդհատ փոփոխման ենթակա են: Երբեմն լինում են ուսանողներ, որոնք օգնության կարիք ունեն, բայց չեն տեղավորվում որևէ տարակարգում, և մենք էլ լծակներ չունենք...

Ռուզաննա Դանիելյան
ՀՊՄՀ Ուսումնական վարչության տեսուչ

-Ասել է թե Դուք կամա-ակամա առնչվում եք ուսանողների սոցիալական խնդիրներին, ապրումակցում նրանց...

-Այո, և հեշտ չի: Հոգեբանորեն շատ ծանր ենք տանում, դժվար է նրանց մերժել, բայց երբ իրազեկում ես՝ հասկանում են: Միևնույն է՝ դժվար է:

-Եթե նորից ընտրության հնարավորություն լիներ՝ ուրիշ, ավելի հեշտ աշխաատանք կընտրեի՞ք:

-Ոչ, համալսարանն այնքան հարազատ է ինձ համար, երիտասարդ տարիներին շփվել եմ ուսումնական տարբեր գործընթացների հետ. միայն զեղչերը չի, մենք իրականացնում ենք նաև ուսանողների շրջափոխումը (ռոտացիան), մրցույթ ենք անցկացնում:

- Հետաքրքիր է, իսկ ռոտացիայի գործընթացը ռիսկեր պարունակո՞ւմ է... Դասախոսի խնամի-բարեկամ ասվածը չի՞ խանգարում...

-Ոչ: Ամեն դեպքում ամեն ինչ արդար է: Այն բանաձևով է հաշվարկվում՝ ուսանողի ստացած գնահատականը բազմապատկվում է կրեդիտներով և բաժանվում, միջինացվում վերջնական կրիդիտի վրա, որը ձևավորում է ուսանողի միջին որակական գնահատականը, որի հիման վրա արդեն մրցույթ է իրականացվում: Այն շատ թափանցիկ է: Կարող եմ հպարտությամբ ասել՝ որ այս տարիների ընթացքում որևէ բողոք չենք ունեցել ուսանողների կողմից: Այդպես է և զեղչերի հետ կապված:

-Գանք Ձեր ընտանիքին. Ձեր երկու զավակներն էլ՝ Մարիամը և Հայկը, ՀՊՄՀ շրջանավարտներ են: Մանկավարժականը ձեզ բոլորիդ համախմբել է մի հարկի ներքո, դարձել երկրորդ ընտանիք:

-Հիմա էլ է երկրորդ ընտանիք, որովհետև տղաս Կուլտուրայի ֆակուլտետում աշխատելու հրավեր ստացավ և դասավանդում է: Նա միջազգային ասոցիացիայի անդամ է, լուսանկարչական տարբեր ցուցահանդես-մրցույթների հաղթող:

Մարիամն էլ ավարտեց «Մասսայական հանդիսությունների ռեժիսուրան», որպես կազմակերպիչ, կառավարիչ կայացել է իր մասնագիտական ոլորտում, բուհում ստացած մասնագիտությունը նրան շատ օգնեց:

-Կա՞մ մի բան, որ Ձեզ չի բավարարում աշխատանքային գործընթացում...

-Ինձ համար այս բուհում ամեն ինչ բավարար է, անգամ բուհի պատերն են ինձ հարազատ: Իմ ապրած տարիները սերտաճել են համալսարանի հետ. շուտով կլրանա 50 տարին, որ այստեղ եմ, անընդհատ տարբեր աշխատասենյակներում եմ գործունեություն ծավալել:

-Իսկ չի՞ ձանձրացնում անընդհատ մի տեղում աշխատելը...

-Չեմ ձանձրանում, որովհետև շրջապատում անընդհատ երիտասարդ կադրեր են աշխատանքի ընդունվում, եթե առաջ ես էի երիտասարդ, շատ բաներ սովորում էի ավագներից, բազմաթիվ ռեկտորների հետ եմ աշխատել, այժմ երիտասարդներն են սովորում ինձանից:

-Ի՞նչ է տվել Ձեզ բուհում աշխատելը:

-Մարդկանց հետ շփվելու կուլտուրա, որն այժմ օգնում է ինձ ճիշտ հարաբերություններ հաստատել նոր սերնդի հետ: Ես ինձ անընդհատ երիտասարդ եմ զգում: Նաև հպարտություն եմ ապրում մեր շրջանավարտների հաջողությունների համար: Ես սիրում եմ Մանկավարժականը:

Ամփոփելով ասեմ՝ մեր բուհ ընդունվում են մարզերի անապահով խավերի երեխաներ, որոնք ի սկզբանե ունեն ուսուցիչ աշխատելու ցանկություն, և եթե մենք չկարողանանք մեղմել նրանց սոցիալական վիճակը, ուսանող չենք ունենա: Իսկ ապահով ընտանիքների երեխաները դիմում են նորաձև մասնագիտություններ ունեցող բուհեր:

-Ի՞նչ կմաղթեք գործընկերներին ու մեր երկրին:

-Կուզեմ խաղաղություն լինի, բայց որ այդ խաղաղությունը նաև սոցիալական արդարություն բերի բոլորին, որի պակասը տարիներ շարունակ ունեցել ենք: Կուզեմ, որ երիտասարդ աղջիկները շատ մայրանան, ցավ եմ ապրում պատերազմում նահատակված մեր տղաների համար:

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«Հաջողության գաղտնիքը արհեստավարժության, նրբանկատության ու հոգատարության մեջ է, իսկ բեմի վրա՝ դաշնամուրին սիրահարվելու և համարձակության մեջ». Լիլի Խաչատրյան

-Որպես բուհի ակունքներից եկող և բուհի կենսագրության մի մասնիկը դարձած դասախոս՝ ի՞նչ հիշողություններ եք պահում Ձեր մեջ անցյալից:

-Մանկավարժական համալսարանում դասավանդում եմ 1972 թվականից՝ շուրջ 54 տարի: Անցյալի հիշողությունները շատ վառ են... Մեր ամբիոնը սկզբում կոչվում էր դաշնամուրային, իսկ ընդունվող ուսանողների թիվը 50 էր, ընդունվել ցանկացողների թիվը՝ կրկնակի ավելի: Ընդունելության քննություններին մեծ մրցույթ էր լինում, ինչը վկայում էր երաժշտարվեստի հանդեպ հանրության մեծ ձգտումը:

-Ինչպե՞ս եղավ, որ նվիրվեցիք երաժշտական կրթության գործին, կրթական ի՞նչ ճանապարհ եք անցել սովորողից, ուսանողից մինչև դասավանդող:

-Էջմիածնի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցի ավարտական հաշվետու համերգին ներկա էր պրոֆեսոր, դաշնակահար Վաչե Ումր-Շատը: Ես նվագեցի Շոպենի «Էքսպրոմտ»-ը և մեներգեցի երգչախմբի հետ Ռոմանոս Մելիքյանի «Վարդը»: Համերգից հետո Ումր-Շատը ասել էր իմ ուսուցչուհի Սեդա Մանգասարյանին՝ այս աղջկան բերեք ինձ մոտ: Այդ օրվանից ես մտա երաժշտության աշխարհը և հենց Ումր-Շատին եմ պարտական մասնագիտության ընտրության հարցում:

Երաժշտական ուսումնարանում սովորեցի 4 անմոռանալի տարի՝ ամեն տարի բազմաթիվ մրցույթներում շահելով մրցանակային տեղեր, հմտանալով ու օրեցօր ավելի սիրահարվելով մասնագիտությանս:

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում սովորեցի պրոֆեսոր Աննա Ամբակումյանի դասարանում: Այդտեղ էր, որ հասկացա դասավանդման յուրահատուկ մոտեցումները Ումր-Շատի և Ամբակումյանի գործունեության մեջ: Եթե առաջինը ստիպում էր առաջին դասին պարտադիր անգիր նվագել՝ նոտաները հանձնելով դասախոսին, ապա երկրորդը՝ երկար ժամանակ տեքստի վրա ամեն մի մանրուք ուսումնասիրել և կատարելագործել նվագն անխտիր: Ումր-Շատի մոտ ես երազում էի կատարող դաշնակահար դառնալ, իսկ Ամբակումյանից ժառանգեցի դասավանդման բանալին: Եվ հիմա ես և՛ դասավանդում եմ լսարանում, և՛ բեմում ներկայացնում իմ կատարողական արվեստը:

-Որտե՞ղ, ի՞նչ դահլիճներում եք հանդես եկել անհատական համերգային ծրագրերով, ո՞րն է եղել ամենատպավորիչը:

-Համերգային ծրագրերով հանդես եմ եկել Մոսկվայի ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, Թբիլիսիի Պալիաշվիլիի անվան երաժշտական ուսումնարանում, Շոպենի ծննդավայր Լազենկի քաղաքում, Երևանի ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում և այլուր: Ամենահիշարժանն ինձ համար Լեհաստանում էր. Վարշավայի Համերգային կենտրոնում, ամեն կիրակի կեսօրին, մեքենայի վրա մոտեցնելով ռոյալը, Շոպենի մրցույթի մասնակիցները նվագում են նրա գործերից: 1969 թվականին ես էլ եմ նվագել այնտեղ Շոպենի գործերից՝ կատարելով մի ամբողջ համերգային ծրագիր:

Լիլի Խաչատրյան
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ

- Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր ուսանողների ապագան:

-Իմ դասարանական տարեվերջյան ամենամյա համերգները վկայում են, որ մեր ուսանողները գիտելիքների մեծ պաշար են ձեռք բերում համալսարանում, և վստահ եմ, որ կարողանում եմ նրանց փոխանցել սեր դեպի արվեստը, դեպի գեղեցիկը, դեպի դասական երաժշտությունը: Ավարտելուց հետո էլ իմ ուսանողները վստահորեն կշարունակեն մեր սերմանածը փոխանցել իրենց սաներին:

-Ի՞նչն եք կարևորում ուսանող-դասախոս հարաբերություններում, ինչպիսի՞ միջավայր է անհրաժեշտ ուսանողին, որպեսզի նա կարողանա դրսևորել իր ողջ ներուժը:

-Ուսանող-դասախոս հարաբերությունների մեջ ես կարևորում եմ վստահությունը, հարգանքն ու պրոֆեսիոնալիզմը: Դասախոսը չպետք է մոռանա, որ ինքն էլ ուսանող է եղել: Միայն գործը սիրելով և համբերությամբ կարելի է հասնել հաջողության:

-Երաժշտության մանկավարժության դասավանդման ընթացքում այսօր որքանո՞վ են կիրառելի ժամանակակից մոտեցումները:

-Շատ ժամանակակից թվայնացման մեթոդներ օգտագործելի են նաև մեր գործում, սակայն մեր մասնագիտության առանձնահատկությունը ենթադրում է, որ կարևորը դասախոսի անձնական օրինակն ու պրոֆեսիոնալիզմն է:

-Ո՞րն է երաժիշտ, դաշնակահար Լիլի Խաչատրյանի հաջողության գաղտնիքը:

-Հաջողության գաղտնիքը արհեստավարժության, ուսանողի հանդեպ նրբանկատության ու հոգատարության մեջ է, իսկ բեմի վրա՝ դաշնամուրին սիրահարվելու և համարձակության մեջ:

-Աշխարհաքաղաքական մերօրյա անկանխատեսելի զարգացումների համապատկերի վրա կարելի՞ է ձևակերպել՝ արվեստը սահմաններ ու ժամանակավոր շահեր չի ճանաչում, արվեստը խաղաղության կոչ է հնչեցնում աշխարհի ցանկացած կետում:

-Արվեստի ուժն անսահման է: Արվեստը միավորում է մարդկությանը, նպաստում ընտանեկան համերաշխությանն ու զավակների դաստիարակությանը՝ անկախ ժամանակաշրջանից և հավատքից, արվեստը եղել է ու կմնա որպես մնայուն արժեք:

-Ձեր գարնանային ուղերձը գործընկերներին, ուսանողներին, երաժշտական արվեստով զբաղվող յուրաքանչյուրին:

-Իմ ուղերձը բոլոր գործընկերներիս՝ ազնվորեն և անձնվիրաբար ծառայենք մեր ընտրած ոլորտին, մեր աշխատանքը դարձնենք նվիրում հայրենիքի բարօրության գործին:

Եվ թող այս գարունը խաղաղություն բերի խենթացած աշխարհի բոլոր ծագերին, որպեսզի արվեստը շարունակի լինել համամարդկային արժեքների երաշխավորը:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Պատերազմը շատ բան փոխեց

Պատերազմի մասին հայրս հազվադեպ է խոսում: Այս երեկո, երկար խնդրանքներից հետո, վերջապես համաձայնեց մի պատմություն պատմել:

-Պատերազմը փոխեց, շատ բան փոխեց... Մի դիրք կար բարձր տեղակայված, որն ուղիղ տեսանելի էր թշնամու դիրքերից, և այդ դիրքի հետ կապված բոլոր գործողություններն արվում էին օրվա մութ հատվածում: Մի օր՝ ցերեկը, իմանում ենք, որ այդ դիրքում ծանր վիրավոր ունենք: Շտապ բուժօգնության մեքենան հրաժարվում է բարձրանալ դիրք, պատճառաբանելով ակնհայտ տեսանելիությունն ու թշնամու համար կենդանի թիրախ դառնալու իրական վտանգը: Ես ու ընկերս՝ Աշոտը, վերցնում ենք ՈւԱԶ-ը և բարձրանում ենք դիրք: Ճանապարհին թշնամին, բնականաբար, մեզ նկատում և սկսում է կրակել մեր ուղղությամբ՝ ականանետով ու հրաձգային զենքերով: Չնայած որ ականի բեկորներից վնասվել էր ամբողջ մեքենան և անիվներն էլ համարյա «նստել էին», մենք կարողացանք հասնել դիրք և իջեցնել վիրավորին: Այսօր նա ողջ է:

-Պա՛պ, իսկ ինչ-որ պահի վախենու՞մ էիր:

Նա մի պահ լռեց:

-Բալես, վախը փիս բան ա, իհարկե վախ կար յուրաքանչուրիս մոտ, ուղղակի, ցավոք, ոչ բոլորն են կարողանում կառավարել վախը: Պատերազմը փոխեց պատկերացումը վախի, մահվան ու կյանքի մասին, պատերազմը փոխեց ամեն ինչ:

Երբ նա ավարտեց խոսքը, սենյակում լռություն էր: Այս պատմությունը մի դրվագ էր հազարավորներից:

Հայրս շատ թռուցիկ, մանրամասները շրջանցելով՝ պատմեց, իսկ ես գրեցի:

Գուցե տարիներ անց այս պատմությունը կկարդան մարդիկ, որոնք չեն տեսել պատերազմը: Ես ուզում եմ, որ նրանք հասկանան ոչ թե միայն վտանգը, այլ նաև մարդկային այն ուժը, որը ծնվում է պատերազմի ընթացքում:

Հայրս հանկարծ կոտրեց լռությունը.

-Պատերազմը պատմություն չէ միայն, այն ապրած կյանք է: Իսկ ապրած կյանքը պարտավոր ենք հիշել:

Էլմիրա ՇԵԼՈՒՆՑ
ՀՊՄՀ լրագրության բաժնի 3-րդ կուրս

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«Հոգեբանությունն իմ կյանքում պարզապես մասնագիտություն չէ: Դա մտածելակերպ է, մարդկանց լսելու և հասկանալու մշակույթ». *Մարիամ Մեհրաբյան*

Մարիամ Մեհրաբյան
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

- Հարգելի Մարիամ, ինչո՞ւ ընտրեցիք Մանկավարժական համալսարանը: Մի փոքր պատմեք ուսումնառության տարիների և հուշերի մասին:

-Մանկավարժական համալսարանում հայտնվեցի պատահական՝ ընտրել էի քաղաքագիտություն (վստահ կարող եմ ասել առանց հասկանալու): Անունս Մանկավարժական համալսարանի «Հոգեբանության» բաժնի ցուցակներում կարդացի: Անգամ հիշելիս հուզվում եմ: Առաջին իսկ դասից «Հոգեբանությունը գիտություն է մարդու մասին…» նախադասությունից հետո հասկացա, որ ճիշտ տեղում եմ: Բուհում հանդիպեցի ամուսնուս և լավագույն ընկերներիս: Դարձանք «Եռահենք»: Ունեմ 21 տարվա ամուր ընտանիք և մարդակենտրոն արժեքներով «Ժեստ» հոգեբանական կենտրոնը, որի արմատները գալիս են իմ մայր բուհից:

Ուսումնառության տարիները հիշում եմ ջերմությամբ. դրանք ոչ միայն գիտելիքների, այլ նաև ինքնաճանաչման ու ձևավորման տարիներ էին: Հաճախ էինք քննարկումներ ունենում դասախոսների հետ, մասնակցում տարբեր ծրագրերի ու փորձարարական աշխատանքների, որոնք մեզ օգնում էին ավելի լավ հասկանալ մարդու ներաշխարհը:

- Հոգեբանությունը Ձեր կյանքում…

-Հոգեբանությունն իմ կյանքում պարզապես մասնագիտություն չէ: Դա մտածելակերպ է, մարդկանց լսելու և հասկանալու մշակույթ: Այն ինձ սովորեցրել է ավելի խորությամբ ընկալել մարդկանց զգացմունքներն ու վարքագիծը, լինել ավելի համբերատար և բաց: Այս մասնագիտությունը նաև օգնում է ինձ ամեն օր սովորել ու զարգանալ: Հոգեբանությունը և իմ անձը շատ ներդաշնակ են:

-Այսօր Դուք ակտիվ գործունեություն եք ծավալում հոգեբանության ոլորտում. արդյո՞ք ուսումնառությունը տվեց բավարար գիտելիքներ: Առանց փորձառության, միայն տեսական գիտելիքներով հնարավո՞ր է առաջ նայել:

-Համալսարանը տալիս է ամուր տեսական հիմք, որը չափազանց կարևոր է ցանկացած մասնագետի համար: Սակայն հոգեբանության ոլորտում փորձառությունն անփոխարինելի է: Մարդկանց հետ աշխատանքը պահանջում է ոչ միայն գիտելիք, այլ նաև զգայունություն, պատասխանատվություն և մշտական ինքնակրթություն: Կարծում եմ՝ տեսությունն ու պրակտիկան պետք է քայլեն կողք կողքի:

-Ձեր նախընտրած մասնագիտությունը դասվում է ժամանակակից մասնագիտությունների շարքին: Ըստ Ձեզ՝ ինչո՞վ է այն առանձնահատուկ:

-Հոգեբանությունն առանձնահատուկ է նրանով, որ այն աշխատում է մարդու ներաշխարհի հետ: Ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մարդիկ հաճախ բախվում են սթրեսի, անորոշության և ներքին կոնֆլիկտների: Հոգեբանն օգնում է մարդուն հասկանալ իրեն, գտնել ներքին ռեսուրսները և հաղթահարել դժվարությունները:

-Հոգեբանության ոլորտում այսօր ակտիվ գործունեություն եք ծավալում: Ի՞նչն է ընկած Ձեր գործունեության հիմքում: Ի՞նչ հաջողությունների եք հասել և ինչի՞ շնորհիվ:

-Իմ գործունեության հիմքում մարդուն օգնելու անկեղծ ցանկությունն է: Աշխատում եմ տարբեր մարդկանց հետ՝ աջակցելով նրանց հաղթահարել անձնական, ընտանեկան կամ մասնագիտական դժվարությունները: Հաջողությունն ինձ համար այն է, երբ մարդը կարողանում է վերականգնել իր ներքին հավասարակշռությունը և առաջ շարժվել: Այդ ամենը հնարավոր է դառնում շնորհիվ շարունակական աշխատանքի, մասնագիտական զարգացման և մարդկանց վստահության:

- Ներկայացրեք խնդրեմ հոգեբանական ծառայությունից օգտվելու կարևորությունը և այդ մշակույթը տարածելու խնդիրները:

- Հոգեբանական ծառայությունից օգտվելը նույնքան բնական պետք է լինի, որքան բժշկի դիմելը: Երբ մարդը հոգեբանական դժվարություն ունի, մասնագետի աջակցությունը կարող է կանխել ավելի լուրջ խնդիրների առաջացումը: Մեր հասարակությունում դեռ կան որոշ կարծրատիպեր, որոնք խոչընդոտում են մարդկանց դիմել հոգեբանի: Այդ մշակույթը զարգացնելու համար անհրաժեշտ է ավելի շատ իրազեկում և կրթական աշխատանք:

- Ճի՞շտ է, որ հոգեբանները մեծ դեր ունեն մարտահրավերներին դիմակայելու և երջանիկ հասարակություն ունենալու գործում: Կբացե՞ք փակագծերը:

- Այո՛, հոգեբանները կարևոր դեր ունեն հասարակության հոգեկան առողջության պահպանման գործում: Երբ մարդիկ սովորում են ճանաչել իրենց զգացմունքները, կառավարել սթրեսը և կառուցել առողջ հարաբերություններ, հասարակությունն ավելի կայուն և ներդաշնակ է դառնում: Հոգեբանների աշխատանքը հաճախ անտեսանելի է, բայց դրա ազդեցությունը շատ կարևոր է:

- Ընտանեկան երջանկության Ձեր բանաձևը: Ձեր նախընտրած մասնագիտությունն օգնո՞ւմ է երջանիկ լինել…

- Ընտանեկան երջանկության հիմքում, իմ կարծիքով, փոխադարձ հարգանքը, վստահությունն ու բաց հաղորդակցությունն են: Երբ մարդիկ կարողանում են լսել և հասկանալ միմյանց, հարաբերությունները դառնում են ավելի ամուր: Իսկ իմ մասնագիտությունը, անկասկած, օգնում է ավելի լավ հասկանալ մարդկանց և պահպանել այդ ներդաշնակությունը թե՛ ընտանիքում, թե՛ կյանքում ընդհանրապես:

Զրույցը՝ Սիլվա Ասրյանի

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՆԱԵՎ ՁԵԶՆՈՎ Է ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԲՈՒՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Զեմֆիրա Ղուկասյանը 1977 թվականի սեպտեմբերից աշխատում է Մանկավարժականում: Հաջորդ տարի կբոլորի նրա աշխատանքային 50 տարին մանկավարժներ կրթող այս բարձրագույն հաստատությունում: Հինգ տասնամյակ՝ երկար ու ձիգ տարիներ, մի ամբողջ կյանք… Տարիները չեն խամրեցրել նրա գեղեցկությունը. արտաքինով նույն հմայիչ կինն է՝ գեղեցիկ ու բարի ժպիտով: Նրան այդպես են ճանաչում բուհում:

Ինչպես է ընտրել մասնագիտությունը հարցին նա պատասխանում է, որ մորաքույրը բժշկուհի էր, ինքն էլ մի ներքին ձգտում ուներ բժշկուհի դառնալու, բայց զուգահեռ տարված էր արվեստով: Հայրը առողջական խնդիրներ ուներ, բուժվում էր Յալթայում Զեմֆիրա անունով մի բժշկուհու մոտ, մտածել է՝ աղջիկ ունենա, անունը դնի Զեմֆիրա, որը բժշկական մասնագիտություն կընտրի: Այդպես էլ եղավ. տարիներ հետո, տեսնելով մորաքրոջ աշխատանքը՝ Զեմֆիրան էլ որոշում է բուժքույր դառնալ՝ մարդասիրական այդ մասնագիտությամբ մարդկանց օգտակար լինելու հպատակադրությամբ :

Մանկավարժական համալսարանում աշխատել է տարբեր սերունդների և 7 ռեկտորի հետ: Սիրով ու ջերմությամբ է հիշում անցնող տարիները՝ պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի և ուսանողության հետ աշխատանքը, որ մարդկային հարաբերությունների ու փոխշփումների իսկական դպրոց էր: Նրա ամեն օրը սկսվում է բուհից, բուհով էլ ավարտվում է: Համալսարանը նրա համար դարձել է երկրորդ տուն: Առողջական խնդիրներով ավելի շատ ուսանողներն են դիմում: Մեծ պատասխանատվությամբ փորձում է օգնել յուրաքանչյուրին, լսել խնդիրները, դեղորայքային ճիշտ ցուցումներ տալ. այստեղ չի կարելի սխալվել, որովհետև մարդկային կյանքի հետ գործ ունես: Երբեմն ամեն րոպեն ու ամեն վայրկյանը թանկ են, պետք է գործել… Երկար տարիներ աշխատել է բժշկի հետ, բայց տարիների ընթացքում կառավարությունը որոշում է կայացրել՝ պոլիկլիկաները այլևս չեն սպասարկի բուհերին: Հետագայում համալսարանի ղեկավարությունը որոշել է, որ գոնե բուժքույր պետք է ունենան բուհում: Բազմափորձ բուժքույրը նկատում է՝ դժվար է աշխատել առանց բժշկի, հատկապես երբ բուժքույրն իրավունք չունի ախտորոշելու իրեն դիմած ուսանողին կամ դասախոսին, և ըստ այդմ էլ՝ դեղատոմս գրել: Դրա իրավունքը վերապահված է միայն բժշկին: Բայց, ինչ արած, լինում են ծայրահեղ իրավիճակներ՝ և դեղորայքային նշանակումներ է անում, և խորհուրդներ տալիս մինչև աշխատողի կամ ուսանողի ինքնազգացողությունը լավանա, հետո միայն անհրաժեշտության դեպքում դիմի բժշկի:

Տարին մեկ անգամ դեղորայք է ստանում, որն օգտագործվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Հիվանդության կամ հիվանդության ախտանշանների դեպքում մշտապես դիմում են տիկին Զեմֆիրային, բժշկական տեղեկանքների վրա է կնիք է դնում: Հեռավոր մարզերից այստեղ սովորող ուսանողների համար իսկական փրկություն է տիկին Զեմֆիրան. ամեն անգամ չես կարող շտապ օգնություն կանչել, տիկին Զեմֆիրան միշտ պատրաստ է օգնելու:

Մարտահրավերներից խոսելիս՝ նա մատնանշում է առանց բժշկի աշխատելու հանգամանքը: Ինքը՝ բուժքույրը, կատարող է, ինքնուրույն ախտորոշելու, որոշում կայացնելու իրավունք չունի: Երբեմն իր աշխատասենյակ չեն կարողանում հասնել, ինքն է վերուվար անում համալսարանում՝ մեկի ճնշումն է տատանվում, մեկի մոտ կոտրվածք է…Դու պետք է հասկանաս, կողմնորոշվես. ամեն դեպքում սխալվելու իրավունք չունես: Այստեղ տիկին Զեմֆիրան և բժիշկ է, և բուժքույր: Տարիների փորձին ապավինած՝ ասում է, որ երբեք չի սխալվել: Ձեռքից եկածն անում է, առաջին օգնություն ցույց տալիս և անրաժեշտության դեպքում շտապ օգնություն կանչում:

Տիկին Զեմֆիրայի հետ ուսանողները և աշխատողները շփվել են են նաև Աղավնաձորի ուսումնամարզական բազայում. 24-ժամյա լարված աշխատանք, երբ շատ հաճախ հագուստով էր քնում՝ շտապ դեպքերում հիվանդին արագ արձագանքելու համար:

«Ինձ համար հարազատ են և համալսարանը, և կոլեկտիվը, և ուսանողության հետ շփվելը: Սիրում եմ այստեղ իմ աշխատանքը: Երբևէ խնդիրներ չեմ ունեցել: Ղեկավարության կողմից մշտապես պատշաճ վերաբերմունքի եմ արժանացել»,- ասում է տիկին Զեմֆիրան՝ խոսելով իր աշխատած տարիների սերունդների տարբերության մասին:

Երբ աշխատանքի անցա բուհում, այստեղ աշխատում էր թերապևտ բժշկուհի Սառա Հայրապետյանը, որին Սառա Թևանովնա էինք դիմում: Բուժկետն այդ ժամանակ ռեկտորատի առաջին հարկում էր՝ ընդարձակ սենյակներով: նաև Վազգեն անունով բուժակ ունեինք, հաշմանդամ էր, բայց շատ գիտակ: Հերթափոխերով էինք աշխատում, մինչև երեկոյան ինքը հերթապահություն կար բուհում:

Աշխատավարձի մասին եմ հարցնում՝ տիկին Զեմֆիրան խուսափում է պատասխանել: Այնքան է սիրում իր գործը, որ 80 հազար դրամով սիրով աշխատում է առավոտյան 9-ից երեկոյան 17.00-ն: Սա այն դեպքում, երբ բժշկուհու գործն էլ է իր վրա: Այսքանով հանդերձ մտքով երբեք չի անցել փոխել աշխատատեղը: Հուսով է՝ մի օր նյութապես կգնահատվի աշխատանքը:

Արմատների մասին էլ խոսելիս հիշում է՝ հայրական կողմը Ալաշկերտի Խաստուր գավառից է: Պապը թուրքական վերահաս ջարդերից ընտանիքը փրկելու միտումով բոլորին հավաքել ու Սելիմի լեռնանցքով սարերով ոտքով հասել են Ագրիճա գետի վերևի հատվածը, որտեղից այդ գետը սկիզբ է առնում: Սայլերով հասնում են Խաստուր, որտեղ էլ հաստատվում են ու նոր գյուղ հիմնում:

Մայրական կողմի պապիկը Պարսկաստանի Սալմաստ գավառից է, որ փոքր հասակում գաղթել է Թիֆլիս. իսկ տատիկը Նախիջևանից է: Ինքը ծնվել է Երևանում, բայց չի մոռանում նրանց պատմությունը:

Տիկին Զեմֆիրան շատ է սիրում գրականությանն ու

Զեմֆիրա Ղուկասյան
ՀՊՄՀ բուժքույր

արվեստին մոտ լինել. իր մասնագիտական առօրյան շարունակում է երեկոյան մի լավ գիրք կարդալով կամ սիմֆոնիկ երաժշտություն լսելով: Հիշում է Աղավնաձորի աշխատանքը, հույս հայտնում, որ մի օր այնտեղ էլ կվերսկսի աշխատանքը:

Ասում է՝ լավ կլինի՝ քիչ հիվանդներ ունենա ու պարապուրդի մատնվի: Աշխատողներին և ուսանողներին մաղթում է առողջություն ու խաղաղ աշխատանքային առօրյա:

Դուրս եմ գալիս համալսարանի բուժքրոջ աշխատասենյակից՝ մտորելով՝ ինչ լավ է, երբ մարդ սիրով է բացում աշխատասենյակի դուռը՝ նվիրումը դարձնելով ապրելու կերպ: Այդպես են գրվում կենսագրության էջերը, դառնում տարիների հանրագումար, մարդու տեսակ ու հասարակության արժանապատիվ քաղաքացի:

Սիրելի՛ տիկին Զեմֆիրա, Դուք մեր համալսարանի կենսագրության մի մասնիկն եք, նաև Ձեզնով է շարունակվում համալսարանական պատմությունը:

Սիլվա ԱՐՅԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՒԼ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության ամբիոնի ուսանողների մասնագիտական պատրաստության կարևոր բաղադրիչներից է ուսումնական պրակտիկան, որն իրականացվում է համալսարանի Պատմության թանգարանում:

Համալսարանի Պատմության թանգարանը և բուհի Պրակտիկայի և կարիերայի կենտրոնը համատեղ իրականացնում են պրակտիկայի կազմակերպման տարբեր ծրագրեր՝ համագործակցելով Երևան քաղաքի թանգարանների հետ:

Այս պրակտիկան ուսանողներին հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները համադրել գործնականին՝ անմիջականորեն ծանոթանալով թանգարանային աշխատանքի տարբեր ոլորտներին և ձեռք բերել փորձ:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները մասնակցում են թանգարանի հիմնական գործառույթներին՝ ծանոթանալով ֆոնդերի համալրման, հաշվառման, պահպանության և գիտական ուսումնասիրության գործընթացներին: Մշակութային ժառանգության պահպանության համատեքստում նրանք հնարավորություն են ստանում ուսումնասիրելու թանգարանային առարկաների հավաքագրման սկզբունքներն ու ֆոնդային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

Ուսանողների ուսուցման կարևոր ուղղություններից է նաև թանգարանային ցուցադրության կազմակերպման գործընթացը: Պրակտիկա անցնող ուսանողները ծանոթանում են ցուցադրությունների ստեղծման սկզբունքներին, ցուցանմուշների ընտրության և ներկայացման ձևերին, ինչպես նաև ցուցադրության գիտական և գեղարվեստական ձևավորման առանձնահատկություններին:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այցելուների հետ աշխատանքի կազմակերպմանը: Ուսանողները մասնակցում են էքսկուրսիաների նախապատրաստմանը և անցկացմանը, ծանոթանում թանգարանային կրթական ծրագրերի մշակման և իրականացման մեթոդներին: Այս

գործընթացը նրանց օգնում է հասկանալու թանգարանի կրթադաստիարակչական դերը և թանգարանային հաղորդակցության արդյունավետ ձևերը տարբեր լսարանների հետ աշխատանքի ընթացքում:

Պրակտիկայի կարևոր բաղադրիչներից է նաև ծանոթությունը Երևանի այլ թանգարանների գործունեությանը: Համալսարանի Պատմության թանգարանի տնօրեն, Հայաստանի Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի նախագահ Ալվարդ Գրիգորյանի նախաձեռնությամբ, ՀՊՄՀ Պրակտիկայի և կարիերայի կենտրոնի ղեկավար Հասմիկ Առաքելյանի աջակցությամբ, Մանկավարժական համալսարանի շրջանավարտների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում կազմակերպվում են ուսանողների այցելություններ Երևանի մի շարք թանգարաններ: Այս այցերը ուսանողներին հնարավորություն են տալիս տեղում ծանոթանալու տարբեր թանգարանների աշխատանքային փորձին, ցուցադրությունների կազմակերպման տարբեր մոտեցումներին, ինչպես նաև թանգարանների կրթական և մշակութային ծրագրերին, որոնց շնորհիվ ուսանողներն առավել ամբողջական պատկերացում են ունենում թանգարանային համակարգի գործունեության մասին և ձեռք բերում մասնագիտական կարևոր հմտություններ:

Այսպիսով, համալսարանի Պատմության թանգարանում իրականացվող պրակտիկան կարևոր դեր է կատարում ապագա թանգարանագետների մասնագիտական ձևավորման գործընթացում: Այն նպաստում է ոչ միայն տեսական գիտելիքների ամրապնդմանը, այլև թանգարանային աշխատանքի գործնական հմտությունների ձեռքբերմանը՝ պատրաստելով մասնագետներ, որոնք ապագայում կծառայեն Հայաստանի թանգարանային ոլորտի զարգացմանը:

Ինչ է միգրացիան. դասընթաց ապագա լրագրողների համար

«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի երևանյան գարասենյակը հանդիպում-թրեյնինգ էր կազմակերպել Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ապագա լրագրողների հետ: Դասընթացին ներկա էին 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները դասախոս Կարինե Տիտանյանի հետ:

«Միգրացիա»՝ նշանակում է վերաբնակեցում և տեղափոխություն, միգրացիան ըստ հատկանիշների լինում է արտաքին և ներքին, էմիգրացիան արտագաղթն է, իմիգրացիան՝ ներգաղթը, միգրացիան դասակարգվում է ըստ նպատակի՝ աշխատանքային, ուսումնական, ընտանիքի վերամիավորում և այլն. այս և այլ հարցերի շուրջ ուսանողների հետ խոսեց միգրացիայի երևանյան գրասենյակի փորձագետ Տաթևիկ Բեժանյանը:

Նա ուսանողներին ներկայացրեց՝ ինչ է միգրացիան և ով է միգրանտը, խոսեց տերմինաբանության, սոցիալական ծրագրերի, միգրացիայի սահմանման, հիմնական հասկացությունների, կամավոր և հարկադիր բնույթի, արտագաղթող և ներգաղթողի, փախստականի կարգավիճակի և այլ հարցերի մասին: Փորձագետը հանգամանորեն ներկայացրեց նաև անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի առանձնահատկությունները:

ՀԿ ներկայացուցիչ Տաթևիկ Թովմասյանն անդրադարձավ միգրացիոն թեմաների լուսաբանմանը, ընդգծեց՝ միգրացիան ունի անվտանգային նշանակություն, ձևավորում է սոցիալ-տնտեսական քաղաքական օրակարգ: Նա ներկայացրեց, որ մեդիան ազդում է հանրային ընկալումների վրա՝ այդ համատեքստում անդրադառնալով միգրացիոն թեմաների լուսաբանման տարածված սխալներին: Լրագրության բաժնի ուսանողները պետք է իմանան՝ միգրացիոն թեմաներին անդրադառնալիս պետք է պահպանեն լրագրողական էթիկան, հենվեն ստույգ փաստերի վրա, ծանոթ լինեն միգրացիոն օրենսդրությանը և օգտվեն վստահելի տեղեկատվական աղբյուրներից:

Հանդիպման ավարտին ուսանողները հավուր պատշաճի մասնակցեցին գործնական խմբային աշխատանքի, ինչպես նաև լրացրին դասընթացի գնահատման թերթիկներ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Սա ընտրություն է, գիտակցական ընտրություն...

Ես տարրական դպրոցի ապագա ուսուցիչ եմ, որը խիզախել է լսել սրտի ձայնին ու ընտրել մասնագիտություն, որն իր տարողունակությամբ մղում է ստեղծագործական աշխատանքի, սահմանում չափանիշներ և տալիս ոգի՝ երազանքն իրականություն դարձնելու համար: Երբ երազանքդ մեծ է, նպատակադիր աշխատանքն ինքնին ուղենիշ է դառնում:

Դպրոցը գերազանցության մեդալով ավարտելով՝ երթուղին արդեն հստակ նախանշված էր՝ ընդունվել ՀՊՄՀ՝ ձեռք բերելու աշխարհի գեղեցկագույն մասնագիտություններից մեկը՝ տարրական մանկավարժի մասնագիտությունը, որի կրողը կոչված է աշխարհից վանելու անհանդուրժողականության, ծուլության, անազնվության բոլոր ծիլերը, ձևավորելու մնայուն արժեքներ:

Այսօր մագիստրոսական կրթությունս շարունակում եմ Սկզբնական կրթության ֆակուլտետում՝ յուրաքանչյուր օր ընտրելով ինքնակատարելագործման ուղին: Ինձ ուղեկցում է հավատամքը՝ տարրական դպրոցի ուսուցիչը, իր մասնագիտությունն էլ սիրտ է ու հոգի՝ նման գարնանային այս տոնին՝ լի լույսով, սիրով ու ջերմությամբ:

Թող տոնն այս զինի մեզ նպատակադիր աշխատանքի պատրաստակամությամբ՝ սիրով ու հոժարությամբ կրելու այն կոչումը, որը ստանձնել ենք, չվախենալու փորձությունից ու արարելու...

Առջևում նոր նպատակների իրագործումն է, և ես պատրաստ եմ այս տարիների բովում ստացած իմ գիտելիքներով ու անձնային-մասնագիտական որակներով արդի դպրոցի ստեղծարար ուսուցիչը դառնալ, այն մեկը, որը պատրաստ է լինելու առաջ մղող ուժ տարրողունակ աշխարհի բովում ինքնիրացվող երեխայի կյանքում. սա ընտրություն է, գիտակցական ընտրություն...

Լալա Հովհաննիսյան
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի
մագիստրատուրայի 1-ին կուրս

Մանկավարժության աշխարհում



Բոլոր ուսուցիչներս էլ մեծ ազդեցություն են ունեցել աշխարհայացքիս ձևավորման գործում, սակայն առանձնահատուկ երախտագիտությամբ եմ հիշում իմ առաջին ուսուցչուհուն, ում օրինակով էլ ընտրեցի ապագա մասնագիտությունս: Նրա նվիրվածությունը, հոգատարությունն ու պատասխանատվությունն է, որ ինձ ուղղորդել է մանկավարժության աշխարհ:

Միևնույն ժամանակ հայրենասիրության կարևորագույն դասերը ստացել եմ Երևանի № 160 հիմնական և № 2 ավագ դպրոցների իմ դասղեկներից, որոնք ճակատագրի բարեհաճությամբ «Հայոց պատմություն» առարկայի ուսուցչուհիներ են: Նրանց շնորհիվ հայրենիքի հանդեպ սերն ու պատասխանատվության զգացումը դարձան իմ արժեհամակարգի կարևոր մասը:

2009–2017 թվականներին սովորել և ավարտել եմ Երևանի Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոցի պարարվեստ բաժինը, որտեղ արվեստի միջոցով ձևավորվեցին իմ գեղագիտական ընկալումները և ստեղծագործական մտածողությունը:

Այժմ սովորում եմ Հայկական պետական մանկավարժական համալսարանում, որտեղ ընտրել եմ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունը: Ինձ համար ուսուցչի աշխատանքը պարզապես մասնագիտություն չէ. այն առաքելություն է՝ կրթել, դաստիարակել և ոգեշնչել մատաղ սերնդին: Հայրենասիրությունը համարում եմ կրթության կարևորագույն հիմնասյուներից մեկը և փորձում եմ այն փոխանցել նաև կրտսեր սերնդին: Մեծ հետաքրքրությամբ եմ ուսումնասիրում Հայաստան–Սփյուռք կապերը և կարևորում եմ հայ ինքնության, լեզվի և մշակույթի պահպանման հարցը աշխարհի տարբեր երկրներում ապրող հայերի շրջանում:

Սկզբնական կրթության ֆակուլտետը, բացի մասնագիտական գիտելիքներ փոխանցելուց, ձևավորում է կարևոր արժեքներ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ուսուցչի, այլև ապագա ծնողի համար: Մեր ֆակուլտետը պատրաստում է ոչ միայն բանիմաց և պատասխանատու մասնագետներ, այլև հիանալի մայրեր, քանի որ մայրությունն ինքնին մեծ պատասխանատվություն պահանջող առաքելություն է:

Կնոջ դերը հասարակության մեջ միշտ եղել է առանձնահատուկ: Կինը կարողանում է համատեղել ուժն ու նրբությունը, հոգատարությունն ու վճռականությունը: Նա կարող է լինել միաժամանակ մայր, ուսուցիչ, ընկեր և հասարակության զարգացման կարևոր շարժիչ ուժ:

Գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ սրտանց շնորհավորում եմ բոլոր կանանց և աղջիկներին: Թող ձեր կյանքը լցված լինի սիրով, հաջողություններով և ձեռքբերումներով: Թող ձեր ուժը, իմաստությունն ու բարությունը միշտ լինեն ոգեշնչման աղբյուր ձեր շրջապատի համար:

Ռոզա Սիմոնյան
Սկզբնական կրթության ֆակուլտետ,
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
մասնագիտության 4-րդ կուրս

Պոեզիայի համաշխարհային օրվան ընդառաջ

ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում հերթական հագեցած բաց դասերն անցկացվեցին՝ նվիրված Պոեզիայի համաշխարհային օրվան (հաստատվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1999 թ., նշվում է մարտի 21-ին):

Արդեն ավանդույթ է, որ վերոհիշյալ տոնին ընդառաջ, «Վերածնունդ» դպրոցում հայ բանաստեղծների քնարերգությունը ներկայացնում են ոչ միայն աշակերտները, այլև նրանց ծնողները: Այս դասերն առավել հուզումնալից էին վերջիններիս համար: Չէ՞ որ նրանցից շատերը վաղուց չէին ընթերցել մայրենի լեզվով գրականություն և նրանց կողմից ընթերցվող նույնիսկ փոքր հատվածները հիշեցրեցին նրանց իրենց դպրոցական տարիները: Այսպիսով, ծնողները հնարավորություն ունեցան տարիներ անց, արդեն իրենց զավակների հետ, կրկին ընթերցել հայ մեծերի՝ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի, Վ. Տերյանի, Պ. Սևակի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի, Ն. Զարյանի բանաստեղծությունները՝ նվիրված հայոց լեզվին, հայրենիքին, հայապահպանությանը:

Ծնողների խոսքերով՝ օտար հողում վերարժևորվեցին մեծ վարպետների խոսքերը, և հիմա իրենք ունեն առավել պատասխանատվության զգացում իրենց զավակների առջև՝ սերմանել սեր հայ գրականության հանդեպ:

Անդրադարձ եղավ նաև այն երգերին, որոնք տարբեր ժամանակներում գրվել են մեծ վարպետների խոսքերով և ակամայից դիպչում են յուրաքանչյուր հայի հոգու ելևէջներին: Անհնար է պատկերացնել որևէ միջոցառում առանց Կոմիտասի ու Հ. Թումանյանի «Կաքավիկի», Պ. Սևակի ու Էդ. Հովհաննիսյանի «Էրեբունի Երևանի», Սարմենի ու Ռ. Ամիրխանյանի «Հայի աչքերի» և, իհարկե, առանց ՀՀ օրհներգի, գրված Բ.Կանաչյանի կողմից՝ մեծանուն բանաստեղծ Մ. Նալբանդյանի խոսքերի հիման վրա:

Հատկանշական է, որ հայկական հիմնի հեղինակը ինչպես նաև հայ մտավորականներ Ս. Շահազիզը, Մ. Էմինը, Վ. Տերյանը, Ալ. Մյասնիկյանը եղել են Լազարյան ճեմարանի տարբեր տարիների շրջանավարտներ և հետագայում դարձել հայտնի գրողներ, արևելագետներ, հասարակական գործիչներ:

Այո՛, ճամփորդությունը հայ գրականության էջերով կարճ էր, բայց բովանդակալից, խորիմաստ ու խորհրդանշական:

Ժպիտն ու հուզմունքն էին ուղղորդում հերթական բաց դասը «Վերածնունդ» դպրոցում...

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից
Մոսկվայի «Վերածնունդ» հայկական
կիրակնօրյա դպրոց

«ԼՈՒՅՍ ԵՎ ՍՏՎԵՐ»

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում մարտի 4-ին տեղի ունեցավ «Լույս ու ստվեր» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսի ամփոփումը, որը կազմակերպել էին Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, լուսանկարչության և սոցիալ-մշակութային ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուբեն Երզինկյանը և ասիստենտ Արմեն Խաչատրյանը:

Լուսանկարների հեղինակները ուսանողներն ու շրջանավարտներն էին. 36 մասնակից ներկայացրել էր 120 աշխատանք:

Ինչպես նշեց դասախոս Արմեն Խաչատյանը՝ ցուցահանդեսն օնլայն դիտման միջոցով հասանելի է լայն շրջանակներին՝ ՀՊՄՀ Google Site Photo Gallery-ում՝ QR կոդով: Ցուցահանդեսը, պարբերաբար օնլայն հարթակում հարստացվում է նոր լուսանկարներով: Ուսանողները վստահ են՝ սև ու սպիտակի հակադրությունը խոսուն է, ուղղակի պետք է տեսնել, հասկանալ:

Ֆակուլտետի ղեկավարները կարևորեցին նման ցուցահանդեսների կազմակերպումը, որոնք ոչ միայն զարգացնում են ուսանողների տեսական գիտելիքները, այլև գործնական ամրապնդում ու տեխնիկական հմտություններ են հաղորդում նոր հարթակում, այլև դիտողներին պարգևում նոր զգացողություններ ու ճաշակ, լուսանկարչական արվեստին առնչվելու գեղեցիկ պահեր:

Ցուցահանդեսի մասնակից ուսանողներին շնորհավորեցին և շնորհակալագրեր հանձնեցին ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը, ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը, դասախոս Արմեն Խաչատրյանը, մասնակիցներին ողջունեց ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը:

Հավելենք, որ ցուցահանդեսին ներկա էին նաև Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի և Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջների «Լուսանկարչական գործ» բաժնի ուսանողները, հյուրեր, որոնք հետագայում Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի հետ հետ համատեղ մասնակցելու են շարունակաբար կազմակերպվող լուսանկարչական տարբեր ցուցահանդեսներին:

Ներկաների կարծիքով լուսանկարը սոսկ կադր չէ, պահի փոխանցում. լուսանկարը ավելին է՝ այն հաղորդում է գույներ ու զգացողություններ, լուսանկարչի ներաշխարհն ու մտածողությունը բացելով դիտողների առաջ, նաև զարգացնում էսթետիկ մտածողություն ու ճաշակ:

Շնորհավորենք ուսանողներին ու շրջանավարտներին՝ մաղթելով նրանց աշխարհաճանաչողության նոր լուսանկարչական որոնումներ:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ